Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՊԵՏՄՈՒՇՈՒ Ա. ԽԵՐԱՄԻ

Պետմուշուկ.ա խերամ

ԿԵԱՆՔԻ ԳԱՂՈՎ

ԱԶԱՏ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Ց. Փ.-ի և Մ. Շ.-ի.

2 կոպ.

8
Խ-48

Բաքու.
ՏՊԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ.
Типографія Перваго Типографскаго Т-ва, Баку.
1902

3 MAY 2005
2 NOV 2009
48
1γ

ԿԵԱՆՔԻ ԳՆՈՎ

ՊԱՏՄՈՒԱԾՔ Ը· ԽԵՐԱՄԻ

ԱԶԱՏ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Յ. Փ.-ի և Մ. Շ.-ի

Բաքու.
ՏՊԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ.
Типографія Перваго Типографскаго Т-ва, Баку.
1902

08 MAY 2013

290

Дозволено цензурою, Тифлисъ 25 февраля 1902 г.

4327
41

ԿԵԱՆՔԻ ԳՆՈՎ.

Հնոցի պէս բոցավառւում էր մի փոքրիկ, հրաշակերտ ամարանոց, որ իր սև շքանկարով որոշակի բաժանուած էր բոցի շիկացած շրջանակից։

Բոցը ծխի սև գալարումներով տարածւում էր պատերից և չարագուշակ ճայթիւնով ու որոտով քայքայում տան ներսը։ Փողոցից պատուհանի միջով նկատելի էր տան ներսը, ուր գալարւում էին կրակի ալիքները։ Այրւած յարկերի առաստաղներից ցած էին նետւում գերանակապները, դէպի ամարանոցը պարոյրով բարձրացած երկաթեայ սանդուխտները ու գերանները։ Կրակը մռնչալով, շառաչելով հրաւիրում էր մենամարտի։ Հրշէջները դղալով իրանց անզօրութիւնը, ակընայանի միմիայն ծառայութեան սկզբունքից դրդուած սրսկում էին ամարանոցից անջատուած հարևան տան պատերը, թողնելով Դիւվալի ամարանոցը կրակի իշխանութեան ներքոյ։

Զ'նկատելով ամեն կողմից իր վրայ նետած հայեացքները, նա ղլխաբաց կանգնած էր աւերման տեսարանի առաջ: Նա միջահասակ, միջին տարիքով, անհոգ և մօդայով (տարազով) հագնուած մի բուրժուա էր, որ նոր սկսել էր չաղանալ և ներկայացնում էր բարեկիրթ քաղաքացու տիպ: Նոյելով խուզած միրուքը, նա անդորը, համարեա մեծամիտ կերպով նայում էր այդ տեսարանին, կարծես շատ չնչին բան էր կորցնում իր կարողութիւնից:

Նրա մօտ ծնկաչոգ նստած կեղտոտ, կէս խանձուած միրուքով և ցնցոտիով անծնաւորութիւնը կապում էր անձեռոցիկում գետնի վրայ թափուած նամակների կոյտը, տեսարակները, փոքրիկ արծաթները, Կարնոյի կիսարծանով (бюстъ) թանաքի սարք ու կարգը և այլն, մի խօսքով այն բոլորը, ինչ յաջողել էր հրդեհից ազատել:

— Իսկ պա՞կերը: Այն, որ գանուում էր դրասեղանի վրայ,—յանկարծ դիմեց նրան Դիւվալը:

Ծնկաչոգ ընկած մարդը մի բոպէ իր առջևը նայեց, կարծես ի՞նչ որ մի բան մտաբերելու համար: Ապա երկու ձեռքը իրար խփեց և մինչ կարող էին նրան հասկանալ և արդելել, մի քանի ոստիւնով կայծակի արագութեամբ նա անյայտացաւ ամարանոցի բոցափառ դռների յետևը:

Ամբոխը՝ դժգոհ Դիւվալի վարմունքից, տրտնջաց: Նա ինքն, մի բոպէ անց անսպասելի դէպքից ուշքի գալով, շփոթուած, բնազդաբար դիմեց դէպի շինութեան մէջ կորած մարդը: Սակայն այս անգամ ընդմիջեցին ոստիկանները: Դիւվալը աշխատում էր մի կերպ դուրս պրծնել, տրտնջում էր, բողոքում էր... Յանկարծ և՛ նրան և՛ ոստիկաններին դադարեցրին ինչ որ բարձր աղմուկներ: Վերնայարկի բոցավառած պատը թեքուել էր դէպի կանգնածները:

Մի բոպէ ևս և նա դղրդիւնով փլուեց խուժանի առաջ: Գետինը շարժուեց: Փոշու և ծխի կոյտերը բարձրացած էին վեր և հրաշէկ աղիւսների կտորները հեռու էին նետուում:

Շինութեան վերնայարկը այժմ նմանուում էր դժոխքին, որ իր արիւնալից բոցերով պայծառ լուսաւորում էր դիշերային երկինքը, բոցեր ցայտելով աղմկող ամբոխի վրայ և կարծես թէ ոսկեզօծելով քնած պարտէզի բարձրադաշտ ծառերի կատարները:

Ամբոխը աղաղակելով ցոյց էր տալիս ամարանոցի դռները, որոնց եռանդաբար սրսկում էին հրշէջները: Նրանց կերպարանքները սևացած էին, նոքա աշխատում էին աղմուկ հանելով. դրանց մօտեցան ուրիշները կարթերը ձեռներին... Ապա մի քիչ անց, չարագուշակ դռներից մի քանի մարդիկ, զինուորականի համաչափ քայլերով մօտեցրին Դիւվալին պատգարակի վրայ դրուած զոհի դիակը:

Նրան դրին գետնի վրայ: Պառկածը չէր շարժուում: Նրա այրուած ու թաց հագուստից ծուխ և

շոգի էր բարձրանում, նրա դէպի ուսը ծռած գլխի վրայ նկատելի էր մի զարհուրելի վէրք։ Արիւնը ծորում էր վէրքից, մերթ ժայթքելով, մերթ բանալով ուղեղը և լցնում պատգարակը։ Նա շնչում էր ծանր և անհաւասար...

Նրա մեռելային դունատուած երեսը լուսաւորուած էր մի ինչ որ է պայծառ արտայայտութեամբ։ Նրա՝ Դիւվալին ծղած հայեացքի մէջ երևում էր ուրախութեան մի փայլ, որը աւելի նման էր յաղթանակի։

Դիւվալը հասկացաւ հայեացքի միտքը։ Նա ծունկ խոնարհեց մեռնողի առաջ և հանեց բաճկոնակի տակ գտնուած թանկագին պատկերը... Ապա, չկարողանալով զսպել հեծկլտանքը, նա թեքուեց դէպի մեռնողը, որի պայծառ լուսաւորուած վարդագոյն դէմքի վրայ թափեց աղի արցունքներ, արցունքներ ոչ թէ բուրժուայի և գործնական մարդու, այլ տանջուող եղբօր...։

Ինձ չ'բաւականացրեց լրագրի համառօտ և պաշտօնական տեղեկութիւնը։ Հրդեհից մի քանի օր անց ես տեղեկացայ Դիւվալից դրամայի նախերգանքը։ Ահա նրա պատմութիւնը։

Տասը տարի սրանից առաջ, սկսեց նա, ամառը բնակում էի այժմեան այրուած ամառանոցում։ Մէկ

օր, համարեա կէս գիշերին, ինձ զարթեցրեց հարևան սենեակում տեղի ունեցած թրխկոցը։ Յատակը և կահ կարասիքը շարժուում էին ինչ որ մեծ ծանրութեան դեմին զարնուելուց։ Ապա ես լսեցի հառաչանքի պէս մի ձայն։ Վեր թռայ անկողնուց։ Հաւատացած, որ տունը գող է եկել, վառեցի ճրագը և զինուած ատրճանակով և չմտնելով ներս, դիտեցի սենեակը։ Նա դատարկ էր երևում, բայց անկիւնի մեծ փոշի պահարան-դրամարկղը տապալուած էր գետին և նրա տակը յատակին ճնշուած ընկած էր մի մարդ։ Գլուխը ազատ էր, սակայն ուսը և արմունկը ճընշուած էին։ Երեսի վրայ ընկած լինելով հանդերձ նա կարող էր նկատել ճրագի լոյսը և լսել ռաքերիս թխկթխկոցը, բայց նա պառկած էր անշարժ։

— Այստեղ ի՞նչ գործ ունէք, մօտենալով նրան հանդարտ հարցրի ես։

Զսպելով հառաչանքը և ծանր շնչելով, նա խլոյն չկարողացաւ պատասխանել։

— Դուք տեսնում էք... թէ ի՞նչ եմ անում։ Պահարանը ինձ ճնշում է։ Ցաւից չեմ կարող բարձրանալ։

Նրա մօտ գետնի վրայ ընկած էին հաստ կարթեր և մի դուր։ Անկասկած նա գողնել էր դրամարկղի թոյլ կողմը։ Սկզբում ցանկացայ այնպէս էլ թողնել մինչև որ ոստիկանները գային, բայց յետոյ

խղճացի։ Մտածեցի որ ատրճանակիս շնորհիւ կարող եմ ստիպել հնազանդելու։

— Եթէ կ'խոստանաք ոչ մի ոյժ չ'գործադրել, կ'ազատեմ ձեզ.

— Խոստանում եմ.

— Բացի այդ ես զինուած եմ և նոյն իսկ յաջող էլ խփող. նախազգուշացնում եմ։

— Միամիտ եղէ'ք, իմ ուսը և արմունկը կոտրուած են, այնպէս որ ես այլ ևս վտանգաւոր չեմ, թոյլ ձայնով պատասխանեց նա։

Դանելով մի հաստ երկաթեայ մեխ և ինչպէս լծակ գործածելով նրան, ինձ յաջողեց բարձրացնել պահարանը։ Գողը յատակից չ'բարձրանալով, սողաց առաջ։ Ուսը տեղահան էր եղած, արմունկը փշուր-փշուր։ Հաւանօրէն նա դժոխային տանջանք կրած կ'լինէր։ Ոտի կանգնեցնելով և նկատելով որ ուշաթափւում է, նստեցրի աթոռի վրայ. ճրագը սեղանի վրայ դնելով, նստեցի իմ անսպասելի հիւրի դիմացը, դիտելով նրա պատկերը։

Նա զարհուրելի և անդուրեկան չէր։ Եւ որքան երկար էի նայում, այնքան աւելի ևս գրաւիչ էր դառնում։

— Կարծեմ այս դէպքը յետ կրկանգնեցնի ձեզ ձեր արհեստից։ Դուք խենթել էք ձեր սեպհական թակարդում, ասացի նրան խրատական ձայնով։

Նա ցնցուեց։ Զայրոյթը գոլաց երեսին, զայրոյթ,

և ոչ չարութիւն կամ երկիւղ։ Այդ միջոցին նա իրան համարեա ազատ էր պահում։

— Դուք ճշմարիտ էք նկատում, ես ինքս ինձ վնասեցի, նախագիծս յիմար էր, պատասխանեց նա։

— Ուրեմն դուք խոստովանում էք, որ գողութիւնը յիմար գործ է։

— Ամենևին. ընդհակառակը գողութիւնը յիմար գործ չէ'։

— Ուրեմն ի՞նչումն է կայանում ձեր յիմարութիւնը, հետաքրքրուեցի ես։

— Դուք այդ չէք զգո՞ւմ։

— Ամենևի'ն.

— Սակայն այնքան էլ դժուար չը պիտի լինի հասկանալ։ Ես պիտի սկսէի ո՛չ թէ դրամարկղից, այլ ձեզնից։ Այն ժամանակ, երկիւղ չ'կրելով որ դուք կարող էք զարթնել, ազատ կ'գործէի։ Սակայն տեսնում էք, երբ ձեր քնած ժամանակը ձեզ դիտում էի, գարշելի և զզուելի էր թւում ինձ, սպանել անպաշտպան մարդուն։ Ստոր վարմունք կը լինէր այդ։ Ուժիցս վեր էր։ Կարծում էի, որ կը շրջեմ դրամարկղը։ Ի հարկէ անմտութիւն էր այդ։ Երկիւղ էի կրում, որ դուք կ'զարթնէք։ Յատակը սահուն էր, անդղոյշ էի գործում, ծանրութիւնը ահագին էր, ես կորցրի հաւասարակշռութիւնս... Թրրաշխկ... Եւ ես բռնուեցի։ Դեռ լաւ է, որ գլուխս չ'փշրեցի։ Էհ, ի՞նչ որ է։

Ես մեղաւոր եմ։ Թող այս դաս լինի, իսկ յետոյ մի քիչ ուշ, մի քիչ շուտ, էհ, չէ՞ որ բոլորը միևնոյն է։ Բայց ոստիկանները որտեղ են։ Հապա ի՞նչու չեն գալիս։

— Երկիւղ մի՛ կրէք, նոքա այս րոպէիս կը-գան ձեզ ձերբակալելու։

— Շատ դեղեցիկ։ Այդպէս էլ պէտք էր սպասած։ Աշխարհի կանոն է, որ մի մասը զզզում է միւսին։ Այժմ էլ կ'սկսեն ինձ զզզել։ Այդ տրամաբանօրէն է, և ես ձեզ չեմ մեղադրում։

— Ձեր դատողութիւնները հետաքրքիր են։ Սակայն դուք, ի՞նչպէս կարելի է ենթադրել, չէ՞ք պրնդիլ, որ այդ ձեր առաջին փորձն է։

Նա կենդանացաւ։

— Ձեմ պնդի՞լ։ Երդւում եմ, որ սա առաջինն է։

Նրա տրտունջը այնքան անկեղծ էր, որ ակամայ հաւատացի։

— Բայց ի՞նչպէս էք ապրել մինչև այսօր։

— Ինչպէս եմ ապրե՞լ. Սատանան դիտէ թէ ի՞նչպէս. աղբի կոյտի և դարշութեան մէջ։ Ինչպէս դող և թափառաշրջիկ շուն, որին պատահողը աքացի է դարնում։

— Եւ ի հարկէ դուք մեղադրո՞ւմ էք հասարակութեան։ Դուք չարացա՞ծ էք հասարակութեան վրայ։ Դուք չարացա՞ծ էք հարուստների դէմ։

— Այո՛, և ի հարկէ չեմ կարող ինձ և ինձ նմաններին մեղադրել. Մենք նման ենք հալածական շների։ Ինչո՞ւ ես էլ հարուստ չեմ ծնուել, ես այդ չը-դիտեմ, չ'գիտէք և դուք։ Այդ ձեզ համար միևնոյն է, իսկ ես, ես տանջւում եմ. ուստի վճռեցի գո-դանալ։

Նա խօսում էր առանց քաշուելու, կարծես իր փրկութիւնը գողութեան մէջ գտնելով։ Այդ ինձ հետաքրքրեց։

— Նշանակում է, բացի գողութիւնից չ'կա՞յ այլ միջոց փող աշխատելու և կեանքը բարւոքելու։

— Ի հարկէ. և գողութիւնը, որ ամեն րոպէ ձերբակալուելու վտանգին է ենթարկուած, աւելի ազնիւ է սովորական դիմակաւորուած գողութիւնից, որից տանջւում են ինձպիսի հաղարները։ Նրա ձայնը երերւում էր հոգեկան տանջանքից։

— Օրինակ, ինձնից և ինձպիսի գողերից ի՞նչով լաւ են Պանամի պարոն բաժնետէրները։ Մի՞թէ նրանք ևս հաղարաւոր կողոպտուած գոհեր չեն ձգել փողոց։

Այդ անդամաղուրկ գողը նայում էր բաց, հա-մարձակ։ Նրա ձայնը երերւում էր ախորժելի հրն-չիւնով. զգացւում էր մի տեսակ լիովին անկեղծու-թիւն։ Զրդիտեմ ի՞նչու հարցրի։

— Հապա եթէ քեզ այժմ նե՞րեմ։

— Խնդրեմ առանց կատակի, պատասխանեց նա, կնջռելով յօնքերը։

— Ես բոլորովին լուրջ եմ ասում։ Դեռ ոստիկաններ չեմ կանչել։

— Ահա՛, թէ ինչու նոքա դեռ ևս ինձ վրայ չեն թափուած։

Եւ նա մի ակրնթարթ մէջքը թեք տուեց, աթոռին, ժաժկելով աչքերը մարակի նման կախ ընկած ձեռքով։

— Եւ ձեզ չի՞ ուրախացնում ազատութիւնը, դիտելով նրան, հարցրի ես։

— Ամենևին։ Ի՞նչիս է պէտք։ Մի՞թէ հիւանդանոցից դուրս գալուց յետոյ ես ստիպուած չ'պիտի դողանամ։ Եւ չ'նայելով երեսիս, կարծես մտածմունքի մէջ, բարձր շարունակեց.

— Ձեզ շնորհակալութիւն յայտնելն էլ աւելորդ կ'լինի։ Ոչինչ չկորցնելով հանդերձ, դուք սովորում էք զգոյշ լինել։ Ազատելով ինձ, դուք ազատ էք կացուցանում ձեզ դատարանի ծանձրոյթից։ Բացի այդ, դուցէ դուք ինձ ազատում էք դլխաւորապէս այն պատճառով, որ կէս ժամ առաջ ես ազատեցի ձեզ մահուանից։ Այդ պարզ է։ Անփորձութիւն էր։ Եւ ի հարկէ դրանում մեղաւորը ես եմ.

— Դուցէ ես վատ եմ անում... Հասարակութեան, ուրիշների համար։ Էհ, ուրեմն դուք չէ՞ք խոստանում նոր կեանք սկսել։ Ուղղուել։

— Ես ոչինչ չեմ խոստանում, պատասխանեց նա առանց երեսիս նայելու։

Ես զգում էի, որ այս թակարդ ընկած, անդամալոյծ դարձած դողի մէջ դեռ վառ է մնացած աղնիւ մարդու հպարտ արդարադատութիւնը։ Բոլորովին ինձ համար անսպասելի, չդիտեմ գլխումս, թէ հոդուս խորքում, ծագեց Քրիստոսի ամենազեղեցիկ, իմաստալից առակը։

— Իսկ եթէ ես ձեզ օգնելու լինի՞մ։

— Մի՞թէ ձեր օգնութիւնը կը բարեփոխէ կեանքս։

— Այո՛, կարող է պատահել։ Եթէ ես աշխատեմ բարեփոխել ձեր կեանքը, կ'խոստանա՞ք։ Ե՞թէ ես ձեզ ինձ մօտ պահեմ, ապահովացնելով ձեր կեանքը ինձ հետ միասին աղնիւ աշխատանքով։ Կարո՞ղ եմ ձեզ վրայ, ինչպէս աղնիւ մարդու, վստահ լինել։

Նա ցնցուեց կարկամածի պէս և աչքերը չռած նայում էր ինձ, սկզբում չ'հաւատալով և կասկածելով։ Ապա աւելի ևս դունատուելով և ժաժկելով աչքերը ծախ ողջ մնացած ձեռքով, հառաչեց.

— Աստուա՞ծ իմ, եթէ այդ ճիշտ լինէր...

Այսաեղ Դիւվալը ընկաւ բազկաթոռի վրայ և լռեց։ Ապա տանջալից ձայնով շարունակեց։

— Այլ էս ի՞նչ ասեմ ձեզ։

Տասը տարի նա ինձ մօտ մնաց միշտ աշխատելով եռանդուն և աղնիւ... Նա օտար անձն չէր, այլ ընկեր, ազգական և ինձ անսահման սիրող... Եւ դուք ականատես էիք, թէ ի՞նչպէս սիրելով ինձ, զրկուեց կեանքից...։

ՎԵՐՋ

4327
41

«Ազգային գրադարան»
NL0168331

ԳԻՆՆ Է 2 ԿՈՊ.

8
Խ-48